

վիշտը կը տարածէ յոտս արքային, եւ Միքայէլ իւր թշնամեաց վրայ կը յաղթանակէ¹։ Բայց վերջին չէր այս քսութիւնն։ Գուրուչէշմէի տան շինութեան ժամանակն ալ միեւնոյն ամբաստանութիւններն կրկնուեցան. սակայն խոհեմ Սուլթանն՝ Միքայէլի թշնամիներն ի սպառ արհիւրեւան կարկելու նպատակաւ, իւր քոյրը՝ Էսմա Սուլթանը ծաղտեալ կը զրկէ՝ անձամբ տեղեկագիր մը բերելու։ Յայտնի էր թէ ի՞նչ պիտի ըլլար հետեւութիւնն։

Բայց քիչ ետքը Միքայէլ՝ իւր միակ ապաւէնն՝ զՍուլթան Մուսթաֆա կորսնցուց, որով փողերանոցի գործակալութեան մէջ իրեն ընկեր տրուեցաւ Յոյն մը եւ Հայազգի մը. սակայն Միքայէլ զատկը յանձն չառնելով՝ դարձեալ նոյն պաշտօնին մէջ առանձինն կը մնայ։

Իւր բարձր զրից մէջ ալ ջերմ՝ եւ մարդասէր սիրտ մը կը տածէր Միքայէլ, եւ այն՝ ոչ միայն իւր հալածեալ կրօնակցացը², այլ նաեւ ամէնուն՝ որոնց կրնար օգնութիւն մ'ընել, որով 1769ին պատերազմէն ետքը զՅոյնս սպառնալու ջնջմանէ կ'ազատէ իւր խմաստուն եւ մեծանձն միջամտութեամբը։ Այսպիսի փառաց

¹ Իւր հաւատարմութեան բազմաթիւ օրինակներէն մին է հետեւեալն։ Արքունի գանձատան աւելորդ իրերն առնուողի հանուած պահուն՝ պղնձի գնով կը գնէ հին ժանգոտեալ սուր մը, զոր մաքրելով ոսկի ըլլալը տեսնելուն պէս՝ կը փութայ զայն արքունի գանձատունը դարձնել, ըսելով՝ թէ «Պղնձ կարծելով գնեցի, ոսկի ելաւ»։ Այս առթիւ Միքայէլի վրայ՝ Սուլթանին տածած համարումը կրնայ դիւրաւ գուշակուիլ։

² Իւր մէկ խօսքին ազդեցութեամբը 1761ի հալածանքէն 53 հոգի ազատելը՝ պատմական է։